

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ, ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶՈՒՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

ՀՀ կառավարության 2013թվականի փետրվարի 28-ի N186-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում 2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման դեմ պայքարի կազմակերպման Ազգային ծրագրում կարևորվում է թրաֆիքինգի կանխարգելումը, բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական կառույցների աշխատողների՝ թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության բարձրացումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ԱՄՔՈՐ/Հայաստան ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպում է մարդկանց շահագործման խնդիրներին նվիրված դասընթացներ՝ թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամների մասնակցությամբ:

Այդ միջոցառման շրջանակներում ս/թ ապրիլի 23-ին դասընթաց տեղի ունեցավ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնում, որին մասնակցում էին մարզի 20 համայնքներից ղեկավարներ, աշխատակազմի քարտուղարներ:

“Աշխատանքային թրաֆիքինգ և հարկադիր աշխատանք” թեման ներկայացրեցին ԱՄՔՈՐ/Հայաստան ՀԿ-ում ծրագրի ղեկավար Վիկտորյա Ավակովան և փորձագետ Հասմիկ Էդիլյանը /«Դեմոկրատիան այսօր»>> կազմակերպություն/: Ներկայացվեցին թրաֆիքինգ, հարկադիր աշխատանք հասկացությունները, համայնքային իշխանությունների դերը թրաֆիքինգի կանխարգելման, բնակչության իրազեկման նպատակով հնարավոր համագործակցության հնարավորությունները: Շահագործման զոհ չդառնալու համար ներկայացվեցին, թե ինչպես արտերկրում գտնվելու դեպքում տեղեկանալ օրինական միգրանտների համար տվյալ երկրում օրինական գտնվելու և աշխատելու պահանջների մասին /վիզա, գրանցում, աշխատանքի թույլտվություն, բժշկական պայմանագիր/:

Հանդիպման մասնակիցներին բաժանվեցին տեղեկատու նյութեր՝ արտագնա աշխատողի հուշաթերթ, անվճար թեժ գծի հեռախոսահամարի մասին պաստառներ, համայնքի բնակչությանն իրազեկելու նպատակով: